## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Գայ համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ,
Հեռ. (0231)60136 , gay.armavir@mta.gov.am

N 215
*09 նոյեմբեր 2017թ.*

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ**

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի 2017 թվականի հոկտեմբեր ամսվա ընթացքում ընդունած որոշումներն ու արձակած կարգադրությունները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. Մարկոսյան**

*Կատ.* '

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

### Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
24 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 35

### ՄԱՆՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով.

Կարգադրում եմ՝

1.Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Արմավիրի մարզի Գայ համայնքի <Մշակույթ> միացյալ տնօրինության տնօրեն Մանյա Կարապետյանին պարգևատրել դրամական պարգևատրմամբ ՝ 77 000 / յոթանասունյոթ հազար/ՀՀ դրամ:

2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

20 17թ. նոյեմբերի 10-ին
գ.Գայ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

### Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
24 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 34

### ԱՆՆԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Համայնքային ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի առաջին մասի <բ> կետով.

Կարգադրում եմ՝

1. Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Աննա Թադևոսյանին՝ ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու համար պարգևատրել դրամական պարգևատրմամբ՝ 173 000 / մեկ հարյուր յոթանասուներեք հազար/ ՀՀ դրամ:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

2017թ. նոյեմբերի 10-ին
գ.Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

24 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 33

## ԽՈՒՐՇՈՒԴ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով.

Կարգադրում եմ՝

1. Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի տեղակալ Խուրշուդ Քոչարյանին պարգևատրել դրամական պարգևատրմամբ ՝ 142 000 /մեկ հարյուր քառասուներկու հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

2017 թ.նոյեմբերի 10-ին
գ.Գայ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---


*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք*
*ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am*


# Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

13 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 32

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին > Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի երկրորդ մասի 4-րդ կետով.

Կարգադրում եմ՝

1. Արմավիրի մարզի Գայ համայնքում մկնանման կրծողների դեմ կազմակերպված պայքարի միջոցառում անցկացնելու համար /թունաքիմիկատների բաշխում և գրավչանյութի պատրաստում / պատասխանատու նշանակել Գայ համայնքի ղեկավարի տեղակալ Խուրշուդ Քոչարյանին:

2. Սույն կարգադրությունն ուժի է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

2017 թ. նոյեմբերի 10-ին
գ.Գայ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**
03 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 31

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԱՅ ՀԱՄԱՅԻՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Գնումների մասին> Հայսատանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի <գ> պարբերությամբ , 26-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի մշակույթի տան մասնակի վերանորոգման աշխատանքների գնման պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման հայտը.

Կարգադրում եմ՝

1. Ստեղծել <ՀՀ ԱՄ -ԳԱՅ-ԳՀԱՇՁԲ-17/02> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. <ՀՀ ԱՄ-ԳԱՅ-ԳՀԱՇՁԲ-17/02> ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Գայանե Հակոբյանին::

3.Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունըկազմակերպել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համպատասխան:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ էմտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

2017թ. նոյեմբերի 10-ին
գ.Գայ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am


# Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

02 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 30

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Գնումների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի <ա> և <բ> պարբերությունների և 20-րդ կետի պահանջներով.

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի կարիքների համար Գայ համայնքի մշակույթի տան մասնակի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանում համարել համայնքի ավագանու անդամ՝ Արթուր Միրզոյանին, իսկ գնումների համակարգող՝ Գայանե Հակոբյանին:

2.Պատասխանատու ստորաբաժանմանը և գնումները համակարգողին՝ գնման գործընթացը կազմակերպել Հայաստանի Հանրապետությանօրենսդրությանը համապատասխան:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

2017թ.նոյեմբերի 10-ին
գ.Գայ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 59

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով ,,Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, ,,Համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 13.11.2008 թվականի թիվ 1328-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Մեսրոպ Գասպարյանի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզի Գայ համայնքի Խաչատրյան 2 փողոց, թիվ 4 հասցեում գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Մեսրոպ Սաշայի Գասպարյանի (ծով. 04.01.1966թ.), Գայանե Պարգևի Մարտիրոսյանի (ծնվ. 04.02.1971թ.), Արթուր Մեսրոպի Գասպարյանի (ծնվ. 13.12.1990թ) գույքային իրավունքները՝ճանաչել նրա սեփականության իրավունքը օրինական 0,14 հա հողամասի և ընդհանուր հողամասի վրա կառուցված բնակելի տան վրա և բնակելի նշանակության օժանդակ շենք- շինությունների (բնակելի տուն՝100.10քմ, բնակելի ծածկած մուտք՝34.40քմ, պահեստ՝2.90 քմ, սանհանգույց՝4.70 քմ, ծածկոց՝42.50 քմ, ջրավազան՝5.50քմ, թոնրատուն՝10.70 քմ, անասնաշենք՝51.70 քմ.)նկատմամբ:
Բնակելի տունը և օժանդակ շենք- շինությունները կառուցվել են 1961 թվականին: Բնակելի տունը բավարարում է ,,Համայնքների վարչական տարածքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 1 և 2 հոդվածների պահանջները: Հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3. Առաջարկել ՀՀ ԿԱԱԳԿՊԿ համապատասխան մարզային ստորաբաժանմանը գրանցել Մեսրոպ Սաշայի Գասպարյանի (ծնվ. 04.01.1966թ.), Գայանե Պարգևի Մարտիրոսյան (ծնվ. 04.02.1971թ.) և Արթուր Մեսրոպի Գասպարյանի (ծնվ. 13.12.1990թ.) սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և հողամասում առկա բնակելի տան նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4. Բնակելի տանը տրամադրել Խաչատրյան 2 փողոց, թիվ 4 հասցեն:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ․․․ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

20 17թ. նոյեմբերի 10-ին
գ.Գայ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 58

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Համայնքային ծառայության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի երկրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի ,,Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին" թիվ 13-Ն հրամանը

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության գլխավոր մասնագետի (ծածկագիր 2.3-1) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարել մրցույթ՝ 2017 թվականի նոյեմբերի 24-ին ժամը 12:00-ին:

2. Նախապատրաստել մրցույթի վերաբերյալ տեքստ և տեղադրել ,, Azdarar.am" կայքում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

10 նոյեմբերի 2017թ.
գ.Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 57

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետ. կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 1-ի թիվ 186-Ն հրամանով հաստատված կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգի 9-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված ,, Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման գերատեսչական հանձնաժողովի" 2017թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 2 դրական եզրակացությունը.

Որոշում եմ

1 Արմավիրի մարզի Գայ համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել փոփոխություն՝ըստ որի Գայ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված համայնքի սեփականություն հանդիսացող արտադրական նշանակության 0,12 հա (ԿԾ 04-033-0032-0027) հողամասը փոխադրել բնակավայրի նշանակության:

2 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

10 նոյեմբերի 2017թ.
գ.Գայ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ
12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 56-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1893-Ն որոշումը

Որոշում եմ

1. Արմավիրի մարզի Գայ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղ. նշանակության (ԿԾ 04-033-0409-0004) 0,1705 հա հողատարածքը և արդյունաբերական և ընդերրքօգտագործման և այլ արտադրական նշանակության (ԿԾ 04-033-0032-0058)0,01 հա հողատարածքը և նրան ամրակցված (ԿԾ 0032-0052-001) 85,7 քմ կիսաքանդ շինությունը վաճառել աճուրդային կարգով:

Լոտ 1-ԿԾ 04-033-0409-0004-0,1705 հա հողատարածքի աճուրդային կարգով օտարման համար մեկնարկային գին սահմանել 518000 (հինգ հարյուր տասնութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, մեկնարկային քայլ՝ 25900 (քսանհինգ հազար ինը հարյուր) Հայաստանի Հանրապետության
դրամ:

Լոտ 2-ԿԾ 04-033-0032-0052-0,01 հա հողատարածքի և նրան ամրակցված (ԿԾ 04-033-0032-0052-001) 85,7 քմ կիսաքանդ շինության համար մեկնարկային գին սահմանել 390000 (երեք հարյուր իննսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ: Մեկնարակային քայլը՝19500 (տասնինը հազար, հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ: Մասնակցության վճար սահմանել 5000 (հինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

**10 նոյեմբերի 2017թ.**

**գ. Գայ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 55-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (2.3-1)ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Համայնքային ծառայության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի երրորդ մասով, 10-րդ հոդվածի առաջին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 256-Ա հրամանը.

Որոշում եմ

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի (ծածկագիր 2.3-1) համայնքային ծառայության պաշտոնի անձնագիրը՝ համաձայն հավելվածի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱՐԿՈՍՅԱՆ

10 նոյեմբերի 2017թ
գ.Գայ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԳԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, (0231)60136 gay.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 54

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի երրորդ մասով ,<<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2017 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 01/07.1/4174-17 գրությունը.

Որոշում եմ

1.Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի 2009 թվականի մարտի 26-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայ համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների նոր անձնագրերը հաստատելու մասին >>թիվ 2 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

1) Որոշմամբ հաստատված թիվ 4 հավելվածի պաշտոնի անձնագրում <Իրավունքներն ու պարտականությունները >> բաժինը լրացնել նոր՝<<Լ>> ենթակետով՝աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ վերահսկում է համայնքի աղբահանության ու սանիտարական մաքրման աշխատանքները:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

10 նոյեմբերի 2017թ
գ.Գայ